

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄԵՐ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ ՀՈԴԵԻՈՐ ՍՆՈՒՑՈՒՄԸ
ՀԱՆԳԱՆԱԿԻ ԴԻՐԲԸ ԲՐԻՍՏՈՆԵՆԻԹԵԱՆ ՄԷՋ
ԽԱԼԴԵԱՆ ՔԱՂԱԲԱԿՐՈՒԹԻՒՆ
Ս. ԳԻՐԲԸ ԻՆՉԵՐ ԿԸՆԷ
Ս. ԳՐԲԻ ԱՐԺԷՐՆ ՈՒ ԴԻՐԲԸ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ
ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ
Կ. Պ. Ա.
ՎԵՐ. Ե. ԿԵՕԲԿԷՕՋԵԱՆ
ՔԱՂԵՑ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ԿԵԱՆԲԷ ՓՇՈՒՐՆԵՐ
ՋՐԻՄՈՒՈՒ ՍՆՆԴԱԿԱՆ ԱՐԺԷՐԸ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՋԱՆԻՑԻ ԷՋԸ

NOR AVEDAPER
B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՅ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրիցն է 150 դրու՝ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ սուրի բաժնեգրի երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիլ եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղըրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուրքի մէկ էջին վրայ մեկնով, դիւրընթեռնի և մաքուր կերպով:

ՀԱՆԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ
4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

Տիկ. Մէննուշ Խարահճըեան 54 ղըշ.
Տիկ. Մէրէյէ Նազարեան 20 ղըշ. Տիկ.
Խաթուն գարամանուկեան 20 ղըշ. Պրն.
Յովսէփ Զէրչիեան 20 ղըշ. Տիկ. Հայ-
կանուշ Գառպարեան 10 ղըշ. (երկու
կանգուն մանուսայ), Տիկ. Մարիամ
Գաւնտագճեան 20 ղըշ. (չորս կանգուն
մանուսայ), Տիկ. Մարիամ Թաշճեան
20 ղըշ., Պրն. Զէքիոս Գաբրիէլեան
20 ղըշ.: (Շարունակելի)

McNESS' EFFERVESCENT SALTS

ԿՈՒԶԵՍ

ՅՍՏԱԿ ԳՈՅՆ

ԼԱՒ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՑԱՒ ՈՒՂԵՂ

ՄՍ.ՔՈՒՐ ԱՐԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ,

ՊէՏԲ Է ԳՈՐԾԱԾԵՍ Mcness' Effervescent salts ԿՈՑՈՒՍԾ ԱՂԵՐԸ, որ քեզ պիտի ազատէ պնդութենէ: Բանգի յաճախ պնդութիւնն է որ յառաջ կը բերէ գէշ գոյն, անմարսողութիւն, գլխու ցտիւր, ինքնաթունաւորում և պաղաւտութիւններ:

Կը գտնուի Տիարք Ն. Իշխանեանի, և Ե. Տայրեանի գեղարանները և Տիար Պէշիւր Բէլէճեանի մօտ:



ՓՈՐՁԷ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ամբողջութեամբ ծողութիւնդ չափազանց դիւրացնել: Mcness մորուք կուղցնող իւղը թող զայն ընէ քեզի համար:

Կը գտնուի բոլոր յայտնի գեղարանները:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 3 ՕԳՈՍՏՈՍ, 1931

ԹԻԻ 16

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԱՐԵՒԵԼԻԻ ՄԷՁ

Գրեթէ բոլոր արեւելեան երկիրները փոխանցումի շրջան մը կ'անցնեն։ Արթընցող Արեւելքը հսկայական ճիգի մէջ է աւելի լաւ պայմաններու տակ կեանք մը ստեղծելու համար։ Այս արթնութիւնը միայն մէկ մարզին չէ սահմանափակուած, կեանքի ամէն մարզերուն մէջ, քաղաքական, կրթական, գիտական, կրօնական, ընտանեկան, և այլն, մշտաշարժ եռուզեռ մը կը տեսնուի։ Արեւելքը իր երազային տնշարժ խոկացողի հնաւանդ դիրքը փոխելով՝ գործօն վիճակ ստացած է։

Արեւելքի ուշագրաւ երեւոյթներէն մէկն է նաեւ կրներու մէջ տեսնուած արթնութիւնը։ Ծարոնէն զատ Ձինաստանի և Հնդկաստանի մէջ շատ մը կիներ, թէպէտ իրենց երկրին ընդհանուր բնակչութեան բաղադրամասը թիւով շատ սահմանափակ, կը մասնակցին իրենց երկիրներուն մէջ յառաջ տարուող նոր շարժումներուն։ Այս երեւոյթը կը տեսնուի նաեւ իսլամական աշխարհին մէջ, ուր կիներ թօթափելով նախկին հարեմի մէջ բանտարկեալի կեանքը կը ջանայ ասպարէզ իջնալ իրը գործօն ազգակ մը՝ ընկերային կեանքին նոր ուղղութիւն և մղում տալու համար։

Մերձաւոր Արեւելքի մէջ թուրք կիներ առաջին շարքի վրայ կը գտնուի այս շարժումը յառաջ տանելու մէջ։ Թուրքիոյ մէջ կիներու ազատութիւն տրուած է իր գործօն բաժինը բերելու

թուրքիոյ կեանքին գրեթէ ամէն շրջանակին։

Արաբական աշխարհին մէջ ալ այսօր՝ թէպէտ ոչ թուրքիոյ մէջ եղածին չափ արմատական՝ բայց զօրաւոր և խոր հոսանք մը կայ, կիներ իր արժանի դիրքին վրայ բարձրացնելու և անոր աշխատանքի բաժինը ապահովելու՝ աւելի երջանիկ և բարձր ընկերային կեանք մը յառաջ բերելու համար։ Թերեւս այս մասին եզրկոտոս կանխած ըլլայ բոլոր արաբախօս երկիրները։ Բայց շարժումը ընդհանուր է։

Սուրիան ևս անմաս չէ մնացած ասկէ։ Սուրիոյ զանազան կեդրոններուն մէջ ֆեմինիստ շարժումի մասնաճիւղեր կան որոնք պարբերաբար իրենց մասնակի ժողովները կ'ունենան։ Այս անգամ Սուրիոյ ֆեմինիստներու Գերագոյն Գրասենեակէն մամուլի մասնախումբը կոչ մը կը հրատարակէ հրաւիրելով բոլոր անդամները ընդհանուր ժողովի մը մասնակցելու, որ տեղի պիտի ունենայ Լիբանանի Ալէյ աւանը Սեպ. 3-10 ին։

Այս համաժողովին կարեւորութիւնը յայտնի կ'ըլլայ երբ կարդանք անոր օրակարգի նիւթերը։ Ասիկայ 1932 ի Աշունը Թեհրանի մէջ տեղի ունենալիք աւելի մեծ ժողովի մը պատրաստութիւնը պիտի ըլլայ։ Խորհրդակցութեան նիւթ պիտի ըլլան Արեւելքը շահագրգռող ընկերային, տնտեսական, գիտական, գրական, բարոյական հարց

ցիւր և մանաւանդ կիրներու ընկերա-քաղաքական իրաւունքները: Ասոնցմէ զատ յառաջիկայ շարք մը ժողովներու յայտագիրներու մասին իրենց տեսակէտները և պահանջները պիտի խորհրդակցին: Ասոնք են՝

1. Պաղտատի Արաբական համաժողովը, որուն նպատակը պիտի ըլլայ Արաբական երկիրներու մէջ մշակոյթի միութիւն յառաջ բերել և ասոր մէջ կնոջ դերը որոշել:

2. 1932 ի իսլամական համաժողովը, որուն նպատակն է արեւելեան և արեւմտեան քաղաքակրթութիւններու լաւ տարրերը իւրացնել և պէշերը մերժել:

3. Աթէնքի մէջ 1932 ին գումարաւելիք ֆէմինիսթներու համաշխարհային ժի. համաժողովին մատուցուելիք պահանջները և ներկայացուցիչները որոշել: Ասիկա պիտի կատարուի Ալէքսի ժողովին միայն կին պատուիրակներուն կողմէ:

Այս երեքէն զատ իրենց կողմէ կատարուելիք կարգ մը ժողովներու յայ-

տագիրները պիտի խորհրդակցին, հետեւեալ կէտերը իբր նպատակ ունենալով. — պատերազմի դէմ և համաշխարհային խաղաղադու թեան ի նպաստ փրորոհականտ. ամուսնութեան պայմանները և մանուկներու պաշտպանութիւնը. ճերմակ գերեզաճառութեան և անբարոյականութեան դէմ պայքար. ալքոլական խմիչքներու դէմ պայքար և կոյրներու պաշտպանութիւն. ժողովներ 1. վարժուհիներու և նախկին ուսանողուհիներու, 2. կին բժիշկներու, մանկաբարձուհիներու, կին քիմիագէտներու և հիւանդապահներու, 3. կին փաստաբաններու և իրաւագիտական ուսանողուհիներու:

Ասիկայ պլտիկ գաղափար մը կրնայ տալ այն ընդարձակ ծրագրին մասին որով տոգորուած են Սուրիոյ ֆէմինիսթները: Մօտիկ ապագան ցոյց պիտի տայ՝ թէ այս հսկայ ծրագիրը ինչպէս և որչափ կարելի պիտի ըլլայ իրագործել: Բայց սա յայտնի է որ Արեւելքի այսօրուան կինը երէկուանը չէ, ինչպէս որ վաղուանը չպիտի նմանի այսօրուանին:

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՍՆՈՒՑՈՒՄԸ

«Մանուկը կրթէ՝ իր ճամբուն սկիզբը, և ծերութեան ատեն անկէ չպիտի չեղի», կ'ըսէ Սողոմոն իմաստունը: Այն ճշմարտութիւնը, որուն կարեւորութիւնը կ'ուզեմ հոս շեշտել, սա է թէ մենք պարտական ենք մեր զաւակներուն հոգեւոր կրթութեան: Պօղոս Առաքեալ ինքզինքը ամէնուն պարտական կ'զգար: Մենք ալ հոգեւորապէս ամէնուն պարտական ենք: Բայց ամէնէն առաջ և ամէնէն աւելի մեր զաւակներուն, ընտանիքներուն պարտական ենք: Մենք պարտական ենք մեր զաւակներուն մարմինը, միտքը, հոգին, տնոնց ներկայ և ապագայ բարօրութիւնը, անոնց ներկայ և անդր-չիրիմ-

եան կեանքը մտածումի եւ հոգածութեան առարկայ ընել: Մեր ազգին հանգէպ մեր բարոյական պարտականութեան է՝ նժանր և կարեւոր մասն ալ այս է: Քանզի եթէ իմ որդիս կամ դուստրս լաւ ըլլայ, կարեւոր քայլ մը առնուած կ'ըլլայ ուրիշներու զաւակներուն ալ լաւ ըլլալուն համար: Ասոր հակառակ ըլլալով եթէ ես թողում որ որդիս կամ դուստրս չար կեանքով մեծնայ Աստուծոյ քով պարտական կը մնամ, քանզի անէծքի ժառանգ մը թողած կ'ըլլամ աշխարհի:

Իմ զաւակիս համար պատասխանատու են նաեւ դպրոցին ուսուցիչն ու տնօրէնը, եկեղեցիին հովիւն ու կի-

րականորեայ Դպրոցի ուսուցիչը: Բայց առաջին անգամ, ուղղակի և ամենէն աւելի ես պատասխանատու եմ: Նոյն խոսքն է, ես, իբր հայր կամ մայր, արթուն և ժիր չգտնուիմ պարտականութիւնս կատարելու մէջ, շատ հաւանական է որ դպրոցին ուսուցիչը և եկեղեցիին հովիւն ալ իրենց պարտականութեանց մէջ հաւատարիմ չպիտի գտնուին, բայց ես անոնց խօսելու լեզու պիտի չունենամ: Ընդհակառակը, երբ ես իբր հայր կամ մայր իմ պարտականութիւնս կատարելու մէջ արթուն և ուշադիր գտնուիմ, ես կրնամ ազդել և օգնել որ ուսուցիչը, հովիւն և այլն ալ իրենց պարտականութեանց մէջ արթուն և ջանասէր ըլլան: Փոխանակ պատասխանատուութիւնը իրարու վրայ նետելու եթէ մեզմէ մէկն մէկը բռնէ իր բաժինը կրէ, զայն կրել աւելի հաւանական և դւրսին կ'ըլլայ: Աստուած ամէն մէկէն կը պահանջէ ճիշդ միայն իր ընելու պատասխանատու եղած գործը: Ամէն մէկը իր բաժինին մասին հաշիւ պիտի տայ:

Իբր ծնողք մանուկներուն հանդէպ մեր պարտականութիւնները ամենէն առաջ կուգան, քանզի մանուկը մեր պատճառաւ և միջոցով ծնունդ կ'առնէ: Մեր զաւակներուն՝ կանուխէն լաւ, առողջ նկարագրի մը տիրանալը պէտք է և օգտակար է ընտանիքին երջանկութեան, աշխարհի անոնց օրհնութիւն մը ըլլալուն, և մանաւանդ իրենց օգտին համար: Մենք պարտական ենք նաեւ Աստուծոյ: Մեր զաւակները պէտք է Աստուծոյ փառքին ծառային: Պէտք է միշտ մեր միտքը պահել Փառաւոնի աղջկան Մովսէսի մօրը ըսածը. «Այս մանուկը առ և ինծի համար դիւցուր» Աստուած ճիշդ այս խօսքը կը խօսի ամէն ծնողի՝ ընտանիքի մէջ ծնած ամէն մանուկի համար:

Ըսինք թէ մեր զաւակները պէտք է որ կանուխէն լաւ և առողջ նկարագրի մը տիրանան: Իսկ լաւ և առողջ նկարագրի մը կրնայ շինուիլ միայն հոգեւոր կեանքի վրայ: Զաւակ մը, որ Աստուծոյ չի վախնար և զԱստուծոյ չի սիրեր ինքնահաւան կ'ըլլայ և մարդերու հանդէպ իրենց պարտականութիւնն ու պատասխանատուութիւնը կ'ուրանան: Հայ Աւետարանականութեան կոչումին և առաքելութեան է՛ն կենսական մէկ մասն է մեր ազգին օգնել՝ օրինակ ըլլալով կրօնասէր և առողջ նկարագրի տէր զաւակներ կրթելու մէջ: Ուրեմն՝

Նախ՝ պէտք է ջանադիր և ուշադիր ըլլանք որ մեր զաւակները շատ կանուխէն բարեպաշտ մեծնան: (Ա) Անոնց մէջ պէտք է յառաջ բերուի յարգանքի զգացում դէպի հոգեւոր արժէքները: Թարգանք հանդէպ Աստուծոյ անունին, Աստուծոյ տան, Աստուծոյ խօսքին և եկեղեցիի հոգեւոր պաշտօնեաներուն: (Բ) Պէտք է գանոնք մեծցնենք Ս. Գիրքը անոնց սորվեցնելով և սիրցնելով: Անոնք տակաւին կարգալ չսորված պէտք ենք անոնց պատմել Ս. Գիրքէն գեղեցիկ պատմութիւններ, և անոնց գոց սորվեցնել գեղեցիկ համարներ: Երբ անոնք կարգալու վարժուին պէտք ենք անոնց ձեռքը Ս. Գիրքը տալ և գանոնք վարժեցնել՝ զայն սիրով և հասկնալով կարգալու: (Գ) Պէտք է ժամանակ և կարեւորութիւն տանք աղօթքի վարժեցնելու: Պէտք է կանուխէն անոնց հոգեցնենք թէ աղօթքը անտեսանելի Աստուծոյ հետ խօսակցութիւն է, և թէ պէտք է ջանանք որ իրենք ալ վարժուին աղօթքով Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի հետ խօսակցելու: Առանց աղօթքի հոգեւոր կեանքի սննդառումը կարելի չէ: Քանզի աղօթքի միջոցաւ հոգին շունչ կ'առնէ: Բայց անոնք պէտք է բաւականանան զոց սորվուած և շինծու աղօթքներով. աշխատելու ենք որ

անոնք ինքնաբերու լիս անձնական աղօթքներ ընեն։ Ասիկայ սորվեցնել ոչ միայն մայրերու այլ նաեւ հայրերու պարտքն է։ Ամէն տան մէջ ընտանեկան աղօթք պէտք է կատարուի։ Թէ՛ հայրեր և թէ՛ մայրեր իրենց զաւակներուն հետ միասին և անոնց առջեւ պէտք է աղօթեն, և ասկէ զատ պէտք է պահանջեն որ զաւակներն ալ աղօթեն։ Զգիտցողին պէտք է սորվեցնել թէ՛ ինչ և ինչպէ՛ս պէտք է աղօթել, սխալողը պէտք է շտկել, անհամարձակը պէտք է քաջալերել, որպէսզի ապագային եկեղեցիի աղօթածովներուն մէջ իրենք ալ կարող ըլլան աղօթել։ Եւ սակայն, միեւնոյն ատեն շատ ուշադրութիւն պէտք է ընենք որ մեր զաւակները իրենց առանձին աղօթքներն ալ զանց չառնեն։

(Դ) Որչափ որ մեր մանուկներուն տարիքը կը ներէ պէտք է զանոնք վարժեցնենք Կ. Դպրոցի և եկեղեցիի պաշտօններուն մասնակցելու, անոնց հասկցնելով թէ այդ պաշտօնները որչա՛փ օգտակար է իրենց համար։ Պէտք է անոնց օգնենք Կ. Դպրոցի դասերը պատրաստելու, մանաւանդ ոսկեղէն համարները գոց սորվելու մէջ։ Փոխանակ քարոզները քննադատելու պէտք է զանոնք մեր մանուկներուն բացատրենք և լրացնենք։

(Ե) Պէտք է ուշադիր ըլլանք որ մեր մանուկները հոգեւոր իմաստակութեամբ չտարուին, հոգեւոր հպարտութիւն չունենան, այլ հեզ և խոնարհ ըլլան։ Եւ թէ անոնք պէտք չէ զոհանան հոգեւոր բաները միա՛յն գիտնալով, այլ պէտք է աշխատին իրենց սորված ճամարտութիւններուն համեմատ ապրելու։ Եւ թէ պէտք է անոնց կանուխէն հասկցնենք թէ իրենք մեղաւոր են և ապաշխարութեան և թողութեան պէտք ունին։ Անոնք պէտք չէ զոհանան ապրելով աւերած կիանքը՝ ըսելով թէ ամէն մարդ մեղաւոր է, այլ պէտք է անոնց հասկցուի թէ իրենք պէտք են

իրենց պարտականութիւնները խղճի մօտ կատարել, և պէտք է զանոնք համոզել թէ Աստուծոյ հոգիին օգնութեամբ կարելի է մաքուր կեանք մը ապրել։

Երկրորդ՝ պէտք է ուշադրութիւն ընենք մեր զաւակներուն ընկերային յարաբերութիւններուն։ Քանզի ազատ ընկերակցութիւնները լաւ բարքը կ'ապականեն։ Մեր մանուկները ուրիշ մանուկներու հետ, և երիտասարդները ուրիշ երիտասարդներու հետ պիտի յարաբերին։ չենք կրնար ասիկա արգիլել։ Քանզի ամէն մէկը իր տարեկիցները կ'ուզէ։ Գիտենք նաեւ թէ մանուկները մանուկներէն կը սորվին, և երիտասարդներն ալ առաւելապէս երիտասարդներէն կ'ազդուին։ Հետեւաբար մեր ուշ գնելիք է՝ կարեւոր մէկ բանը սա է թէ մեր մանուկները ոչ թէ չար այլ լաւ ընկերներու հետ յարաբերութիւն մշակեն։ Քանզի Աբիսողոմ մեռնելէ ետքը անիմաստ կը մնայ Դաւիթի ու հարցումը թէ երիտասարդ Աբիսողոմը ո՞ղջ է։ Պէտք է ատենին աշալուրջ գտնուինք։ Ինչպէս որ գէշ ընկերակցութիւնը լաւ բարքը կ'ապականէ, միւս կողմէն ալ լաւ ընկերակցութիւնն ու օրինակը շինիչ ազդեցութիւն կ'ունենան։ Հաւատանք թէ ինչպէս որ գէշը նոյնպէս ալ լաւը փոխանցուելու կարողութիւն ունին։ Դանիէլի որոշումը ինչ մեծ ազդեցութիւն ունեցաւ իր ընկերներուն վրայ։ Ուրեմն որո՞ւ կը յանձնես քու զաւակդ, ո՞ր դպրոցը կը զրկես զայն, ո՞ր վարպետին քով դրած ես զայն, մանաւանդ որ զի կամ զուստրդ որո՞նց կ'ընկերակցի, փողոցին մէջ որո՞նց հեռ կը խաղայ, ո՞ր տեղերը կը պտըտի, ո՞ր գիրքերը կը կարդայ։ Փամանակ չանցած պէտք է այս կէտերը պրպտես, և իթէ օխալ բան մը կայ պէտք է անոր ճարին նայիս։

(Շարունակելի)

Ե. ՔԱՍՈՒՆԻ

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԴԻՐՔԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄԷՋ (2)

3. Թէ ինչպէս ՄԱՆԳԱՆԱԿԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԵՑԱԼ: Հանգանակը եկեղեցիի անգործութեան և ակարութեան նշան է, այլ ընդհակառակը անոր հոգեկան և իմացական կեանքին առած կերպարանքը, անոր եռանդին չափը, և իր պատգամը արտաքին աշխարհի պահանջներուն ընծայելու ջերմ բաղձանքը կը ցուցնէ: Ասիկայ կատարել որչափ որ կարեւոր նոյնչափ ալ զըտուար եղած է, և յաճախ հակաճառութեանց, վիճաբանութեանց և նոյնիսկ թշնամութեանց նիւթ եղած է: Ինչպէս ամէն բանի մէջ նոյնպէս ասոր մէջ ալ չափազանցողներ գտնուած են, և սիրոյ պայքարը ատելութեան, քինախնդրութեան զէնքերով կատարած են: Ասիկա պարզապէս ամօթալի է: Սակայն, ինչպէս որ ծովուն մակերեսը կ'ալեծփի բայց տակը անդորրութիւն կը տիրէ, յիշեալ յուզող մնալից վիճաբանութեանց տակ գտնուած է խորին յարգանք մը և պաշտպանելու ջերմ սէր մը Քրիստոսի և Անոր Թագաւորութեան հանդէպ: Ասոնց ամէնէն նշանաւորը Նիկիոյ Ընդհանուր Ժողովն է, որ գումարուեցաւ 325 ին: Պէտք է մտաբերել թէ եկեղեցիին երկուք ու կէս դարերէ ի վեր հալածանքներու պատճառաւ ստորերկեայ Բաբալոնացիներու մէջ պահուած էր. թէ այս ատեններուն, որոնք անգերազանցելի են տեղի ունեցած հալածանքներով, եկեղեցիին անթիւ նահատակներ տուած է. և թէ վերջապէս Կոնստանդիանոսի քրիստոնեայ դառնալովը հաղիւ երկրին երեսը ելած էր:

Ժողովին մասնակցելու համար երբ հրաւերը զրկուեցաւ ամէն կողմէն 318 եպիսկոպոսներ և պատուիրակներ մէկ տեղ եկան, որոնց ձեռքերը կամ ոտքերը կտրուած, աչքերը փորուած էին հալածանքի շրջանին և այս կամ այն

կերպով Տէր Յիսուսի վէրքերը կը կրէին: Անոնք ոչ թէ մտքով կամ երեւակայութեամբ այլ իրենց անձնական փորձառութեամբը ստիպուած էին Քրիստոսի աստուածութիւնը ընդունելու: Քանզի անոնք անոր հետ այնպիսի յարաբերութիւն ունեցող կենդանի վկաներ էին, որոնք իրր թէ առիւծներու դուբին մէջ Անոր հետ բնակակից եղած և կրակի փռուերուն մէջ Անոր ընկերակցութեամբ պաշտած էին: Իսկ հիմա, հրաշալի կերպով կայսրին քրիստոնէութիւնը ընդունիլը և ազատութիւն հռչակելը Անոր աստուածութեան իբր անժխտելի մէկ փաստը կը ճանչնային: Ասոնք տեսան թէ Արիստականութիւնը իրարմէ կը բաժնէր աստուածութիւնը և մարդկութիւնը և կ'աշխատէր Քրիստոսը աստուածութենէն զրկել: Օրուան հերոսը Աթանաս և իր ընկերները հրապարակ նետուեցան: Անոնց դիրքը յայտնելու համար սովորական առած մը դարձած էր ըսել՝ թէ Աթանաս աշխարհի գէմ է, աշխարհ՝ Աթանասի գէմ: Խնդիրը այնչափ կենսական նկատեցին որ անոր մէջ իրաւախոհութեամբ համաձայնութեան գալու միտում մը գոյութիւն չունենալէ վատ՝ գործածուող բառերը վերջին ծայր ուշադրութեամբ կը քննուէին և այդ կերպով կամ կ'ընդունուէին կամ կը մերժուէին: Ժողովը թէպէտ Յուլիոս 20էն մինչև Օգոստ. 20 տեւեց, բայց վէճը իրապէս 63 տարի շարունակեց: Աթանաս հինգ անգամ աքսորուեցաւ, 20 տարի աքսորականի կեանքը ապրեցաւ: Բայց վերջապէս հաստատ կերպով ընդունուեցաւ Քրիստոսի աստուածութիւնը: Երկրի մը ազատութեան համար կռուողները իրենք զիրենք մահուան և տառապանքի կ'ենթարկեն: Բայց անոնց զոհողութեան

պտուղը իրենց յաջորդող սերունդը կը վայելէ։ Նիկիական Հանգանակին համար այդ տառնուած հերոսները կոռուցան և մենք այսօր անոնց ջանքերուն արդիւնքը ժառանգած ենք։ Յարգա՛նք անոնց։

4. ՀԱՆԳԱՆԱԿԻ ԵՐԿՈՒ ՏՍՐՐԵՐԸ, ինչպէս որ մարդը մարմին մը և հոգի մը ունի, նմանապէս հանգանակն ալ արտաքին և ներքին երկու մասերէ կը բաղկանայ։ Արտաքինը, մարմնականը կը կազմէ անոր արտայայտութեան կերպը, քացատրութիւնը և մանրամասնութիւնը։ Անականակալ բան մը չէ որ այս մասը փոփոխութեան կամ բարեփոխութեան ենթարկուի։ Անձնական փորձառութեան բացատրութիւնը, իր խղճին մէջ համոզումներուն պարզարանութիւնը և իմացական կարողութեան զարգացումը որչափ ատեն որ փոփոխութեան ենթակայ են, շատ բնական է որ հանգանակն ալ նոր ձեւ ստանայ մարդուն, ժամանակին և կրթութեան առաժնային համեմատ։ Միւս կողմէն անուրանալի է որ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ՏՍՐՐ ՄԸ ԿՍԾ, որ կրնայ անոր հոգին կոչուիլ։ Եթէ ոտքը և ձեռքը կտրուին մարդ կրնայ ողջ մնալ, բայց հոգիէն բան մը չի կրնար կտրուիլ։ Այն ճշմարտութիւնները որոնք հանգանակի հոգին կը կազմեն ասոնք են, — Աստուծոյ մէկ ըլլալը, Բերիտոսի մարմնացումը, կեանքը, մահը, յարութիւնը, Ս. Հոգւոյն անձնաւորութիւնը և այլն։ Ասոնք իբր ՀԻՄՆԱԿԱՆ ՏՍՐՐԵՐԸ կը գտնուին բոլոր արժանահաւատ հանգանակներու մէջ, և Թողովակառութիւնն ալ մէջը ըլլալով բոլոր յարանուանութիւններու մէջ։ Այն անհատը որ ասոնք չ'ընդունիր կրնայ գտալ իմաբակցութիւն մը կազմել, կամ կրնայ ուրիշ կրօնքի մը ապաստանիլ։ Այսպիսի մէկը կրնայ բարոյապէս մաքուր, համոզումներուն մէջ անկեղծ, իր ըսածին և

կարգացածին համեմատ կրօնական սկզբունքներու մասին խօսելու մէջ հրապուրիչ ըլլալ, Յիսուսի խօսքերով կըրնայ ըսուիլ թէ՛ «Աստուծոյ Թաղաւորութենէն հեռու չէ»։ Բայց ուէ մէկը չի կրնար երաշխաւորել թէ անոր մէջը կը գտնուի։

5. ՀԱՆԳԱՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ երկու է։

(Ա) Նոյն հոգեւոր փորձառութիւնը ունեցած, նոյն պաղափարային համոզումներու տիրացած անձերը ժողովի և միացնել։ Դրօշը թէպէտ կտաւէ կը շինուի և փչող հովէն կը ծածանի, և սակայն ազգու միջոց մըն է տրուած զինուորները հաւաքելու և զանոնք իբր կազմակերպեալ բանակ մը պահելու մէջ։ Նմանապէս հանգանակը միջոց մըն է որ կը հոչակէ թէ հաւատացեալները իրարու հաղորդակից, զօրութիւն և թէ կ'ապահովէ անոնց այդպէս մնալը։ (Բ) Հանգանակը անհրաժեշտ է մեր կրօնքը աշխարհիս ներկայացնելու համար։ Աշխարհ՝ իր գալէն տառջ կ'ուզէ դիտնալ, իր ներս մտնելէն առաջ կը փափաքի հասկնալ։ Ձեռք կըրնար անոնց զգացում տալ, պէտք ենք անոնց սկզբունքներ, խորհելու յիսթեր տալ։ Մեր կրօնքը անհատական և ենթակայական համոզումներէ՛ բաղկացած չէ՝ անիկայ «մեր մէջ գտնուող յոյսին պատճառը ամէն պահանջողին» կրնայ տալ իբր տրամաբանական, ձեւաւորեալ և հաստատ դրութիւն մը։ Բանակի մը մէջ առաջին անգամ մարտական ոգի պէտք է գտնուի, որուն գրեթէ հաւասար չափով կարեւոր բաներ են զինուորական կրթութիւնն ու կազմակերպութիւնը։ Առանց առաջինին բանակը վախկոտներու բաղմութիւն մըն է, իսկ առանց երկրորդի բանակը դոյուլութիւն չունենար։ առ առաւելն խառնիճաղանճ հրոսակներ կը մնան, որոնցմէ մեծ արդիւնք մը չի կրնար ակնկալուիլ։ Երկրորդութեան մէջ որչափ որ ձայնի

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՄ ԽԱՂԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Պատմագետներէն ոմանք կը պնդեն թէ Արարատեան քաղաքակրթութեան բուն աղբիւրը Բաղդէական է, և այս՝ ուղղակի կերպով կամ Ասորեստանեան խողովակի միջոցաւ հոն անցեր է: Ուրիշներ կը խորհին թէ Եգիպտական է, և Բետացիներու և Ասորեստանցիներու միջոցաւ հոն անցեր է: Բայց նոր տրւած պատկերացումները «Էնսայկլոփիտիա Պրիթանիկա» կը յայտարարէ թէ Արարատեան ցեղեր Փոքր Ասիոյ արեւմտեան կողմերը ապրող Բետացիներու մէկ մասն են և իրենց քաղաքակրթութիւնն ալ Կրէտէի Մինոսեան քաղաքակրթութիւնն է, զոր իրենց հետ մէկ տեղ բերին: Իրենց քաղաքակրթութեան ծագումը ուրկէ որ ըլլայ, սա իրողութիւն մըն է թէ այս Արարատեան կամ Խաղբեան ազգերը ի հունի քաղաքակրթութիւն մը ցուցադրեցին և մարդկային ազգին օգտակար եղան:

Ճարտարապետքան մէջ Ուրարտացիք Յոյներու, Հռոմէացիներու և Ասորեստանցիներու չհաւասարեցան թէպէտ, բայց բաւական յառաջդիմութիւն ցոյց տուին: Մեհեաններ, պալատներ, ջրմուշներ, օտարերկրեայ ճամբաներ, կոթողներ և ամուր զոհակներ շինեցին: Վանի մեծ զոհակը ասոնց պարծն է: Արգիշտի Ա. Վանի այս մեծ ապառա-

ջը փորելով մէջը սենեակներ, սրահներ շինեց: Լուսնապրիտի որդին Սարգուրիս՝ Վանի այդ մեծ ապառաժին քով զի խաբի քարերէ այդ հաստաբետ և անառիկ զոհակը շինեց: Մենուաս 75 քիլոմէթրօ երկայն ջրանցք մը շինելով Վանի դաշտը ոռոգեց:

Արհեստներու մէջ անոնք գիտէին երկաթագործութիւն, ոսկիւրչութիւն, անագազինձ ձուլել, հանքերէ երկաթ, պղինձ, անագ հանել և անոնցմէ գործիքներ շինել, աղիւսագործութիւն և այլն: Տեղեակ էին նաև անասնաբուծութեան և երկրագործութեան:

ԳԻՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Ասորեստանցիներու սեպածեւ գիրերը առնելով գործածեցին, բայց պանոնք բարեփոխեցին և անոնց Խաղբեան կաղապար մը տուին:

ԿՐԾՆՔ: Սկիզբները Ուրարտացիք կամ Արարատեան ժողովուրդներ երեք աստուածներ կ'ընդունէին, — Խալդի՝ արեւելքի արարիչը, Տէխուրս՝ հողի աստուած, Արգիշիա՝ կենսատու աստուած: Հին Հնդկներն ալ երեք աստուածներ կ'ընդունէին. կամ՝ աստուած ինքզինքը երեք կերպարանքով՝ ցոյց կուտայ և կը գործէ՝ կըսէին. — Պրահմա՝ արարիչ, Վիշնու՝ պահպանող և Սիվա՝ կործանող:

Ժամանակի հոլովմամբ Ուրարտական կրօնքը սկսաւ վատասերիլ: Խալդի լուսնի կերպարանքով և Արգիշիա արեւակի ձեւով մարդոց կ'երեւի ըսելով լուսնի և արեւակի կերպագելու սկսան: Երթալով աստուածներու թիւը շատացաւ. այնպէս որ մեծ ու փոքր 46 աստուածներ ընդունեցին: Կախարդութիւն, բախտագուշակութիւն և աստղաբաշխութիւն ժողովուրդին մէջ այնչա՛փ մեծ ազդեցութիւն ունեցած էին որ կրօնքը ցած մակարդակի վրայ մնաց:

Գեղեցկութիւնը անհրաժեշտ է նոյնքան ալ անհրաժեշտ է ձայնանիւթերու համաձայն երգելը: Կրօնքի մէջ կեանքն ու հանգանակը իրր երկու թիւեր պէտք է ներդաշնակօրէն գործեն: Ոյն ատեն միացեալ ճակատ մը, ներդաշնակ երգ մը, հաւաստարկչաեալ բարձրացում և զարգացում մը ապահովուած պիտի ըլլայ:

(Շարունակելի)

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վաճառականութիւնն, Փիւնիկէի, Պա-
ղեստինի, Պարսկաստանի, Փոքր Ասիոյ
և Հնդկաստանի հետ վաճառականական
յարաբերութիւններ ունենալով, իրենց
երկրին բերքերը և արտադրութիւննե-
րը կը տանէին և այն տեղերէն յարմար
ապրանքներ կը ներածէին: Տիպրիսի
վրայ լաստերով կը նաւարկէին:

Ուրարտացիք ի՞նչ ծառայութիւն
մատուցին համաշխարհային քաղաքա-
կրթութեան: Խաղեան կամ Արարատ-
եան երկիրներ և յետոյ զանոնք ներկա-
յացնող Ուրարտացիք՝ Կովկասեան լեռ-
նազաւառներու մէջ, Կասպից և Սև ծո-
վերու եղերքներուն վրայ և Պարսկաս-
տան բնակող շատ մը ժողովուրդներուն՝
արհեստ, վաճառականութիւն, երկրա-
գործութիւն և այն ժամանակի գիտու-
թիւնները սորվեցուցին: Մանաւանդ

հայերու քաղաքակրթութեան ուսուցիչ-
ները եղան:

Բայց անոնց ամէնէն կարեւոր ծա-
ռայութիւնը սա էր: Այն ատեններ Կեդ-
րոնական Ասիոյ մէջ բնակող բարբարոս
և վայրենի Մոնկոլներու, Թաթարներու
և Հոներու դէպի Եւրոպա, Եգիպտոս
և Բաբելոն արշաւանքը արգիլող պա-
րիսպ մը եղան: Եթէ Ուրարտացիք Ա-
րարատի երկիրներու մէջ զօրաւոր պե-
տութիւն հիմնած չըլլային, կարելի էր
որ Յունաստան, Հռովմ, Եգիպտոս և
Բաբելոն՝ դեղին ժողովուրդներէն ոտ-
նակոխ պիտի ըլլային և համաշխարհա-
յին քաղաքակրթութիւնը հիմակուան
բարձր մակարդակին չպիտի բարձրա-
նար:

Հայկպ

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՒՆՏԱԴՅԱՆ

ՍԲ. ԳԻՐԲԸ ԻՆՉԵՐ Կ'ԸՆԷ

Կէս գիշերը բաւական անցած էր:
Հեռախօսով լուր մը եկաւ Վեր. Տր.
Րիմմըրի, այն գիտնական քարոզիչին՝
որուն անունը միքանի ամիս առաջ
«Նոր Աւետարեւր»-ի մէջ կարգացած
էինք: Հեռախօսը ստիպողական հրա-
ւէր մըն էր, ևս Անկէլէի աղքատիկ
ստորին մէկ թաղէն: Հեռախօսը կը
ըսէր. «Եթէ անմիջապէս գաս, կարելի
է մեծ օգտակարութիւն մը կրնաս ու-
նենալ, հոգի մը կը փրկես... դուն
զիտես»: Միւսնոյն ատեն հասցէն տը-
ւաւ ու հեռախօսը դադարեցաւ խօսելէ:
Հէրրի Րիմմըր արդէն պառկած էր և
քունէն արթննալով հեռախօսի գոր-
ծիքը ականջը դրած էր: Ան սկսաւ
մտմտալ, պէտք էր այդ վտանգաւոր,
անձանթ հեռաւոր վայրը երթալ, թէ
ոչ: Որոշումը առաւ. «Ի՞նչ որ ալ ըլ-
լայ պէտք է երթամ», ըսաւ: Հազուե-
ցաւ և ինքնաշարժով շուտով հասաւ

վայրը: Մութ, աղտոտ, աղքատիկ,
ոլոր մոլոր փողոցի մը մէջ գտաւ տան
թիւը: Դուռը բացաւ, մութ անցքե-
րէն վերի յարկը ելլելով, դուռը զար-
կաւ, ներսէն կոշտ ձայն մը «նե՛րս» ե-
կուր» պոռաց: Ներս մտաւ: Ի՞նչ
տէսնէ. աղօտ լոյսով սենեակ մը, ներք
մարդ մը՝ առանձին սեղանի մը քով նս-
տած էր, որուն առջեւ եւ յետքի շիշը:
ու անոր քովը բէվօլվէր մը դրուած
էր... աւազակի մը, գինեմոլի մը հե-
ղէմ դէմի կը գտնուէր: մէկէն դողաց-
պահ մը զղջաց առանձին գալուն: Սա-
կայն հիմա ներսն էր: Քաջբար կե-
ցաւ մարդուն դէմ, ըսաւ. «Դո՛ւն էիր
հեռախօսով զիս կանչողը...»: «Այո»,
ըսաւ ան: «Ի՞նչ կրնամ ընել քեզի հա-
մար» հարցուց Րիմմըր: Մարդը պատ-
մեց թէ ինչպէ՞ս հարուստ վաճառական
մըն էր լաւ ընտանիքի և զաւակներու
տէր մէկը: Սակայն գինեմոլութեան

ու ըստ իր խաղի պատճառով հարստութիւնը, մեծ վաճառատունը կորսնցուցած էր: Մարդը շարունակեց պատմել. «Այս իրիկուն տուն եկայ և գտայ թէ ընտանիքս ու զաւակներս այս քաղաքը ձգելով հեռու տեղ մը գացած են, ուր երթալին առանց լուր տալու որ պէտքի չի: Իրենց հտեւէն չեթամ, ու զիրենք աւելի անհանգիստ չընեմ: Ահա այս պարագաներուն տակ որոշած եմ ինքզինքս մեղքի, ու ընտանիքս ալ ազատել իմ նեղութիւններէս: Պիտի գլխովնամ, և սա ընկողնէս ինքզինքըս պիտի սպաննեմ քեզ կանչեցի որ վկայ ըլլաւ այս խօսքերուն:»

Հէրրի Րիմմըր զգաց վայրկեանին ահաւորութիւնը և սկսաւ մարդուն քարոզել, խրատել որ ապաշխարէ, հաւատայ Տէր Յիսուս Քրիստոսի, որ միշտ պատրաստ է փրկելու խաչի վրայի աւազակն իսկ... Սակայն մարդը անդրդուելի մնաց իր որոշման վրայ: «Ուրեմն», ըսաւ Հէրրի Րիմմըր, «ճիշդ հիմա բան մը մի՛ ընիր, իմ երթալէս ետքը ըրէ, գոնէ ինծի խնայէ քեզի համար չատ մը նեղութեանց ենթարկուելէ»: «Հաւ, այդ խօսքդ կը յարգեմ», ըսաւ մարդը:

Հէրրի Րիմմըր չբաժնուած ջանք մը ևս ըրաւ անոր. իր Աւետարանը անոր առջեւ դրաւ ու ըսաւ. «Սա կարմիրով ընդգծուած համարները կրկին ու կրկին

կարդա, ատոնք ցոյց պիտի տան քեզի թէ Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը մաքրէ: Խօսք տուր որ այս կարմիր ընդգծուած համարները երկու անգամ չկարդացած ինքզինքդ պիտի չսպաննես»: Մարդը այսչափին ալ խօսք տուաւ: Հէրրի Րիմմըր իր գրքպանի Աւետարանը հոն սեղանին քով ձգեց ու մեկնեցաւ:

Աւետարանը իր պաշտօնը կատարեց: Մարդը երկու անգամ զայն կարգաց, յուսադրուեցաւ երրորդ անգամ մը կարդալու, և ինքնիրենը եկաւ, ու ապաշխարեցաւ. ա՛լ նոր արարած մը եղած էր ան: Թող տուաւ բոլոր մոլութիւնները և սկսաւ գործի, և նորէն յաջողեցաւ, պատուաւոր վաճառական մը, ու եկեղեցիի մը հոգաբարձութեան անդամ և կիրակնօրեայ Դպրոցի դասատու եղաւ: Տարիներ ետքը Րիմմըրին հանգիպելով ըսաւ. «Քու այցելութիւնդ, ու քու Աւետարանդ իմ փրկութեանս պատճառը եղան»:

Աւետարանը քանինե՛ր փրկած է: Ամէնքս ալ անհատապէս և ներկայ բոլոր եկեղեցիները կը կարօտինք, հոգեւոր նորոգութեան ու արթնութեան որ կարելի է միայն մեր նախկին սովորութեան համեմատ Ս. Գրքի առօրեայ ընթերցումով, և մեր ներքին սենեակին մէջ աղօթելով:

Կ. Պ. Ա.

Ս. ԳՐԷԻ ԱՐԺԷՔՆ ՈՒ ԴԻՐԲԸ

Ս. Գրքին իմ անձին հետ ունեցած յարաբերութեան տեսակէտէն անոր արժէքը երեք կէտերու մէջ կը կայանայ:

1. Անիկայ իմ Աստուծոյ խօսքն է:
2. Անիկայ իմ ծնողներէս ինծի մնացած ժառանգ մըն է:
3. Անիկայ զիս լուսաւորած է. «Անիկայ իմ ոտքերուն ճրագ ու իմ շա-

ւիղներուն լոյս է»:

Bible Society Record և Record of Christian Work թերթերը՝ Ամերիկայի փրկութեան Բանակին ընդհանուր հրամանատարին, Օր. Է. Պուլի «Ս. Գիրքը և Կարօտները» խորագրով շատ հետաքրքրական մէկ յօդուածը հրատարակեցին, որուն մէկ մասին թարգմա-

նութիւնն է հետեւեալը: Բայց զօրաւոր կերպով կը յանձնարարեմ որ անգլիերէն հասկցող ամէն մարդ անոր բնագիրը կարգայ:

«Ս. Գիրքը բոլոր գիրքերուն գիրքն է: Ան տեսած է անոնց ծնունդը, և պիտի տեսնէ նաև անոնց գերեզմանը: Անիկայ միակ գիրքն է որ մեր հայրերէն աւելի ծեր է, աւանդութենէն աւելի ճշմարիտ, համալսարաններէն աւելի խոհեմ, հանգանակներէն աւելի ուղղափառ, գիտութենէն աւելի անսխալական, թագաւորներէն աւելի զօրաւոր, ուրիշ բոլոր գրականութիւնէն աւելի տարածուած և յաճախակի թարգմանուած է:

Ս. Գրքի թշնամիները երկիրն ու երկինքը խուզարկած են ամէն փաստ դտնելու, որ զայն գործածեն Ս. Գրքի վկայութիւնները ժխտելու, անոր ուսուցումը կործանելու, անոր հրաշքները ուրանալու համար: Անկրօն գիտնականները Ս. Գրքի դէմ յարձակած են քիմիագէտի շիշով, աստղագէտի հեռագիտակով, խուզարկուի չափող ձողով, երկրաբանի մուրճով: Բայց չը նականներու, քննադատներու և սկեպտիկներու յարձակումներուն դէմ Ս. Գիրքը կը մնայ անփոփոխ, անսասան և անխախտ...

Բռնակալութիւնը երկար դարեր Ս. Գրքի դէմ հրամաններ օրոտացած է: Հրդեհները զայն փճացուցած են: Անթիւ մարտիրոսներու արիւնը անոր էջերը ոռոգած են: Ներկայիս Ռուսիոյ մէջ Ս. Գրքի մուտքը արգելուած է:

Բայց հակառակ բոլոր հալածանքներու, բոլոր բռնութիւններու, բոլոր քանդումներու Ս. Գիրքը յաղթական է: Աստուծոյ Գիրքն է ան, և Աստուած կը պաշտպանէ զայն:

... Մարգկութեան Ս. Գրքի համար զգացած կարօտը տիզերական է... Անիկայ կը գտնուի մարգարէի կրկնացին, ձկնորսի վերարկուն և հովիւի թիկնոցին և տանտիկնոջ զոգնոցին մէջ: Անիկայ իր տեղն ունի դատաւորի սեղանի վրայ, զինուորի մարտիկին, վաճառականի զրահողանին, վաճառողի օտարակին, նաւորդի ընկողնոցին, դպրոցականի պայտասակին մէջ: Անիկայ կը յարմարի այրեցեալ կամ սառուցեալ բոլոր դժոխներուն: Ան չկրնայ կարգացուիլ ռեզոնի վրայ, բալսիւրին մէջ, հարաւային բլուրի մը վրայ արջատը մակաղելու կամ Ալպեան սարերն ի վեր մագլցելու տտեն: Ո՛հ, երբ կը տեսնեմ որ չկայ տեղ մը, պարագայ մը, անհատ մը որուն Ս. Գիրքը չյարմարի, կը հոմոցուիմ թէ Աստուած միայն կրնար այսպէս հրաշալիօրէն պայմաններուն յարմարող գիրք մը գրել:

Դուն կրնաս ինձմէ առնել բոլոր այն բաները զոր կեանքը ինձի թանկագին կ'ընծայէ, բայց երբեք խն Ս. Գիրքը:»*

Ե. ԿԷՕՔԿԷՕՋԵԱՆ

*Այս յօդուածը տանկերէն լեզուով զրկուած է մեղի. Պոլիթիքուլութիւնը անգլիերէն բնագրէն հայերէնի թարգմանուած է: Ծ. Խ.

ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ԿԵԱՆՔԻ ՓՇՈՒՐՆԵՐ

Տր. Քանուէլ, նախկին զինուորականը ապա փաստարանը և ներկայ քարոզիչը, Պոստոնի փոքր եկեղեցիին հովուութիւնը ստանձնելէ ետքը այդ

եկեղեցին իր պատմութեան նոր շրջանը թեւակոխեց: Ա՛լ ան լքուած և մոռցուած եկեղեցի մը չէր: Ամէն կողմէն հոն կը զիմէին կիրականօրեայ պաշտօն-

ներու ժողովուրդը համար: Եկեղեցական շէնքերը տարողութենէն շատ աւելի թիւով մարդերով կը լեցուէր և նոյնիսկ շատեր տեղ չկարենալով գտնուել կը գառնային:

Փոքր աղջիկ մը կիրակի մը փափաքեցաւ այս եկեղեցիին Կ. Դպրոցին պաշտօնին մասնակցիլ: Բայց երբ հոն հասաւ չկրցաւ իր փափաքին գոհացում տանալ: շէնքը լեցուած էր, ա'լ իրեն համար տեղ չկար: Տխրեցաւ, քանզի իր մանկական սրտին յոյսը փշրուած էր. և սկսաւ լալ:

Երկայն հասակով և սեւ մազերով կայտառ մարդ մը տեսնելով աղջիկին լալը մօտեցաւ անոր և կարեկից շեշտով մը պատճառը հարցուց: Աղջիկը պատմեց իր պատմութիւնը, որ խորապէս յուզեց այս հուժկու բայց քաղցր մարդը: Եւ զայն ուսը առնելով Կ. Դպրոցը տարաւ և բազմութեան մէջէն անցնելով զայն ներս առաջնորդեց: Տր. Քոնոսէլ ինքն էր ան:

Աղջիկը երբ տուն վերադարձաւ իր հօրը ըսաւ լուրջ շեշտով մը. «Հայր, ես գրամ պիտի չինեմ խնայողութեամբ: Տր. Քոնոսէլի օգնելու որ աւելի մեծ Կ. Դպրոցի և եկեղեցիի շէնք մը շինել տայ: Հայրը խնդաց բայց արտօնեց որ փոքր աղջիկը մօնը գործեր կատարէ գրամ շահելու համար: Եւ աղջիկը շահածը կը ձգէր իր արկղիկին մէջ:

Քանի մը շարաթ չանցած փոքրիկը հիւանդացաւ և մեռաւ: Տր. Քոնոսէլ կատարեց անոր թաղման արարողութիւնը: Աղջիկին հայրը պատմեց թէ ինչպէ՞ս փոքրիկը աւելի մեծ եկեղեցական շէնքի մը համար գրամ կ'աւելցընէր. և Տր. Քոնոսէլի յանձնեց աղջիկին խնայած 57 սէնթը (72 դրուշ սուրի):

Քոնոսէլ շատ զգացուեցաւ և աւելի մեծ նոր շէնքի մը կառուցումը եկեղեցիին խնամակալներու ժողովին մէջ

խորհրդակցութեան նիւթը դրաւ: Բոլոր ժողովականները, որոնք մինչեւ այն ատեն այս մասին երբեք չէին խորհած, իրենց կարգին շատ յուզուեցան լսելով Տր. Քոնոսէլի պատմած փոքրիկ աղջիկին մեծ գաղափարն ու զոհողութիւնը: Եւ որոշեցին շինել:

Յարմար գետին մը գտնուած էր: Բայց Քոնոսէլ ունէր միայն 57 սէնթ: Բայց իրեն յատուկ համարձակութեամբ և լաւատեսութեամբ կալուածատիրոջ քովը գնաց: Իր ազդու ոճով պատմեց իրենց պէտքը, և թէ ինչպէ՞ս առայդ իբր նուէր ստացած էր 57 սէնթի գումարը: Կալուածատէրը հետաքրքիր ուշադրութեամբ մտիկ ըրաւ Քոնոսէլի կարճ պատմութեան, որ իր մէջ յուզել բան մը կը պարունակէր: Եւ մարդը ինքնաբերաբար ըսաւ.

—Այս գետինը ձեզի կը ծախեմ ձեր որոշած նպատակին գործածելու համար և պատրաստ եմ իբր առաջին մասնավճար միայն այդ 57 սէնթը ընդունիլ, և մնացածին համար մուրհակ մը ստանալ հարիւրին հինգ տոկոսով:

Այս լուրը շատ ուրախացուցիչ անակնկալ մը եղաւ ժողովուրդին համար: Բայց աւելի մեծ անակնկալ մը պիտի պատահէր:

Տր. Քոնոսէլ կիրակի մը քարոզելու համար հրաւէր ստացաւ ուրիշ քոյր եկեղեցիէ մը: Պաշտօնը կատարելէն ետքը իր կնոջ հետ տուն կը վերադառնար: Յոգնած էր: Երբ տունը մօտեցաւ զուրսէն տեսաւ որ բոլոր շէնքը լուսաւորուած էր և մէջը՝ մարդերով լեցուն: Իր ժողովուրդն էր, որ ծրագրած էր ամէն բան հաճելի անակնկալ մը ներկայացնել իրենց սիրելի հովիւին: Երբ Տէր և Տիկ. Քոնոսէլ ներս մտան իրենց յայտնուեցաւ թէ գետնին բոլոր դրամը 10000 տոլար հանգանակուած էր: Այս բոլորը ծագում առաւ միայն այդ աղջիկին 57 սէնթէն:

ԶՐԻՄՈՒՌԻ (SEA WEED) ՍՆՆԴԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Հաւանական կը թուի որ ծովեղեր-
եայ ժողովուրդները, ինչպէս Բալիֆոր-
նիայի Հնդկիները, զանազան ծովի լուեր
(algae) գործածած են լրացնելու հա-
մար իրենց կերակուրները: Այս ժողո-
վուրդին կմասքները կը յայտնեն թէ՛
իրենք զերծ մնացած են այլ և այլ հի-
ւանդութիւններէ, և անդամաղնիչ-
ները հարկւրաւոր զանկեր զննելէ հաջը
միայն երկու երեք փտած առամներ
կրցած են գտնել. ասկէ զատ խալիպը
(վլիուռ) նոյն խիլ գոյութիւն չունէր:

Մի քանի տարիներ առաջ էր որ զիւ-
տունները հասկցան թէ չափ մը հիւան-
դութիւններ գոյութիւն չունին այն
երկիրներուն մէջ՝ որոնք ծովային բոյ-
սերը կերակուրի տեղ կը գործածեն:
Վոր օրինակ Ճաբոն, Չինաստան, Ի-

Ահա այսպէս Տր. Քոնուել ներշնչեց
նախ փոքրիկ աղջիկը, ապա եկեղեցիին
խնամակալութիւնը, հաջը կալուածա-
տէրը և ամէնէն հաջը բոլոր ժողովուր-
դը:

Այս շէնքին կառուցումը մեծ ձեռ-
նարկ մըն էր այս եկեղեցիին համար.
բայց երկու տարուան մէջ շէնքը աւար-
տեցին, որուն պարտքը շատ չանցած
կատարեալպէս վճարեցին: Եկեղեցիին
որահը կրնայ 4200 մարդ առնել, բայց
միայն 3135 աթոռներ զրուած են:

Շէնքը ունի նաև մեծ սրահ մը Կ.
Դպրոցի համար, ընդարձակ սենեակներ
երիտասարդաց և երիտասարդուհեաց ըն-
կերութիւններուն համար, մասնաւոր
սենեակներ եկեղեցիի պաշտօնեանե-
րուն և վարիչ մարմիններուն համար:
Բոլոր շէնքը արժած է 109,000 տուար
1891 ին: «Եթէ փոքր եկեղեցի մը շի-
նէինք, ծանր պարտքի տակ պիտի մը-
նայինք» ըսաւ Տր. Քոնուել իր մէկ բա-
րեկամին:

լանտա, և ուրիշ երկիրներ:

Այս խնդիրները լուծելու համար ա-
նասուններու սնունդներուն յայտնի
փորձագէտ մը Եւրոպա գնաց հետազո-
տութիւններ կատարելու: Ան տեսաւ
որ ծովեղերեայ գիւղացիները ծովային
մամուռը հաւաքելով արեւուն տակ կը
չորցնեն, և արջաօր կերակուրներուն
կը խառնեն և թէ այսպէս սնուցուող
կենդանիները զօրաւոր և առողջ են:

Ապա Ամերիկայի մէջ զանազան
փորձեր կատարուեցան: Նշանաւոր
քիմիաբաններ կանչուեցան և ջրիմու-
սի ջուրը առնելու միջոց մը հնարուե-
ցաւ, որով անհղժ պիտի պահուէր բոյ-
սին պարունակած տարրերը, կենսա-
հիւթերը (vitamin) և բուսականաչը:
Այս կերպով պատրաստուած այս ծո-
վային բոյսը զանազան հիւանդութիւն
ունեցող արջաօր հօտերու տրուեցաւ,
այսինքն իրենց առօրեայ կերակուրնե-
րուն խառնուեցաւ: Եւ երկու ամսը-
ւան միջոցին անոնց հիւանդութիւն-
ները գործնականապէս անհետացան:
Ուրիշ նախիրներու վրայ ալ փորձեր
կատարուեցան որոնք նոյն արդիւնքը
տուին:

Հիմա գանձ աղբոյսին (kelp)՝ Նախ-
նական ժողովուրդները աղբոյսը իբր
կերակուր գործածած են: Միայն թէ
Ի. դարու քաղաքակրթեալ մարդը իր
չափ մը ուտելու սովորութիւնները լը-
քած է: Գիտուններ ուղեցին փորձել
զայն դարձեալ, և ասոր համար ճիւղակ
առնէտներ գործածեցին: Անոնց վրայ
երկու տարի փորձ կատարելէն հաջը,
հիւանդ կիներ և մարդիկ բերուեցան
Ջրիմուռը ճաշակելու համար: Յաջոր-
դաբար ամիսներով ջրիմուռ տրուեցաւ
անոնց: Այս փորձերը նշանակելի
արդիւնք տուին: Գրեթէ ամէն հիւանդ

չափով մը օգտուած էր ջրիմուռէն:

Կառաւարական քիմիաբանները և նշանաւոր համալսարաններու քիմիա-
զէտները ազդոյսը տարբազարեւոյժ զը-
տան թէ՛ ան կը պարունակէ երեսուն
հիկու տարրեր և A, B, C, D, E, կոչ-
ուած կենսահիւթերը (vitamin):

Կենսաբանները կ'ըսեն թէ անասնոյ
բջջները չին կրնար անդործարանս: Եր
հանքային նիւթերը իւրացնել և զա-
նոնք գործարանաւոր բջջներու վերա-
ծել, որոնք կը կազմեն նախահիւթին
protoplasm) հիմը: Բայց այս պաշ-
տօնը բոյսը կրնայ կատարել:

Բոյս մը հանքային նիւթերով հա-
րուստ է երբ գինքը սնուցանող հողը լի-
ցուն է նոյն նիւթերով:

Երբ առաջին անգամ գետինը բարձ-
րադաւ ծովու յատակէն՝ հանքային
նիւթերով շատ հարուստ էր հողը և
կրնար սնուցանել ընդարձակ քանա-
կութեամբ բուսականութիւն մը: Բայց
առկա առ տակաւ երկար դարերու
միջոցին անձրեւը հանքային նիւթերը
երկրէն քշեց տարաւ կրկին ծով, այս

կերպով այդ նիւթերը հողէն պակսեցան
և հողը տկար բուսականութիւն մը
միայն կրցաւ արտադրել: Այսօր ամե-
նամեծ կենդանիները և ամէնէն առատ
բուսական կեանքը ծովուն մէջ է որ կը
գտնուին: Այս ծովային բոյսը, ջրի-
մուռը (Macrocystis pysifera) ովկիա-
նոսի յատակը ժայռոտ գետնի վրայ կը
բուսնի և արմատ չունի, բայց ինքզին-
քը հսկայ ժայռերուն վրայ հաստատելէ
հտքը 50—60 ոտք դէպի մակերեսը կը
մաղլցի արեւը տեսնելու: Ամենամեծ
բոյսերէն մէկն է ան որ գոյութիւն ունի
աշխարհի վրայ:

Մեր ներկայ սնունդներուն մէջ յա-
ճախ կը պակսին մեր մարմինն անհրա-
ժեշտ եղող կարգ մը տարրեր, որոնց
չգոյութեամբը կարգ մը ախտեր, տկա-
րութիւններ, ժամանակէն առաջ մա-
շում յառաջ կուգան: Ջրիմուռի գոր-
ծածութեամբը գիտունները կը յուսան
մեր սնունդները զօրացնել, որուն ար-
դիւնքը ըլլալով զօրացնել նաեւ մարմի-
նը, ինչպէս որ փորձերը կը հաստա-
տեն:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՄԵՐ ԱՆՑՈՒՑԱԾ ՕՐԵՐԸ

Նանթըքէթ՝ Մէսէչուսէց նահան-
գի եզերքին մօտ Ատլանտեան ովկիա-
նոսի մէջ փոքր կղզի մըն է: Այս ա-
ռաւոտ հօն ժողովական եկեղեցին գա-
ցինք: Եկեղեցական շէնքը, որ ներ-
կայիս Կ. Դպրոցի և ընկերային հաւա-
քոյթներու համար կը գործածուի,
1711 ին շինուած է:

Նանթըքէթ նշանաւոր ամառանոց
մըն է: Ամառնային եղանակին Մ. Նա-
հանգաց Արեւելեան կէսէն, մեծ մա-
սամբ Նիւ Եորքէ, թերեւս 35000 մար-
դիկ հոս կուգան: Ժողովական Եկեղե-
ցին ամառնային ամիսներուն համար
մասնաւոր յանձնախումբ մը և ամառ-

նային այցելուները նկատի առնելով
գործի մասնաւոր ծրագիր մ'ունի: Նիւ
Եորքի մէջ Տր. Փոզարթի հեղեղիէն
կին միներդաղ մը առանց վճարումի կը
երգէ առտուան պաշտօններուն: Եկե-
ղեցին մեծ կարեւորութիւն կուտայ
պաշտօնին երաժշտական մասին, որ
բարձր արժէք մը կը ներկայացնէ, բայց
որ՝ հակառակ ներկայութիւնը հաւանա-
կան եղող նշանաւոր հիւրերու՝ կղզի
երգահանահարի մը և երգիչներու կողմէ
կը կատարուի: Կիրակի առտուն Նիւ
Եորքի ամենահարուստ և նշանաւոր ե-
կեղեցիներէն մէկուն հովիւը ունենդի-
րներուն մէջ կը գտնուէր:

Նանթըքէթի հովիւին քարոզը մինչեւ որ արդիւնքի մը յանգինք իրերու մասին կատարելապէս խորհելու պէտքին, մեր անհատական հոգեւոր վիճակին, եկեղեցիի վիճակին և ապագային մասին էր։ Աշխարհը մեծ շփոթութեան մէջ կը գտնուի։ Ամէն մարդ զործի ճնշումին տակ է։ Ոչ մէկ մարդ խորհելու ժամանակ ունի։ Վազանցի օրերը, կիրակիները, եկեղեցական պաշտօններու պահերը այն ժամանակներն են, երբ մէկը կրնայ և պէտք է կենալ և խորհիլ թէ ներկայիս ինչ է իր քրիստոնէական կեանքին վիճակը, թէ եկեղեցիին կրնա՞յ զաղափարի և վարքի բարքի մէջ տեսնուած ներկայ յեղափոխութեան մէջէն ապահով անցնիլ։ Անիկայ մասնաւորապէս երկրորդ հարցումին մասին խօսեցաւ, և ըսաւ։ «Այն փորձաքարը՝ որուն համեմատ կրնայ պատասխանուիլ՝ Աստուծոյ թագաւորութեան յառաջացումին համար եղած օգտակարութիւնն է։ Օգտակար եկեղեցին, որ որոշ նպատակ ունի և զայն իրագործել կ'աշխատի, այս փոթորիկէն պիտի վերապրի»։

Անցեալ կիրակի կղզիին արեւմտեան ծայրին մօտ միութենական եկեղեցի մը գացինք։ Շէնքը տրամադրելի է բոլորին կողմանէ զործածուելու համար։ Կիրակի առտուն կանուխ Լատին Կաթոլիկ պատարագ մը կար։ Իրիկունը կրօնական պաշտօն մը կրնայ կատարուիլ ցորեկուան պաշտօնին մասնակցելու առիթ չունեցող սպասաւորներու, կամ աշխարհական մարթ մարդերու համար, որոնցմէ կղզիին մէջ շատ կը գտնուին։

Կէսօրէ մէկ ժամ առաջ տեղի ունեցող պաշտօնին մէջ, որուն մենք մասնակցեցանք, երգերը նստաբաններու վրայ դրուած ժողովական եկեղեցիի հոգեւոր երգարանէն ընտրուած էին։ Երգարաններու քով կը գտնուէին Եպիսկոպոսական եկեղեցւոյ աղօթագիրքը,

որուն համեմատ եղաւ պաշտօնը, և որուն՝ սրտանց մասնակցեցաւ ժողովուրդը։ Քարոզը նոյն եկեղեցւոյ մէկ եպիսկոպոսին կողմէ տրուեցաւ, որ տարիներէ ի վեր իր ամառները կղզիին մէջ անցուցած էր։ Երբ պաշտօնը վերջացաւ եկեղեցական նոր զանգակ մը նուիրագործուեցաւ իբր մէկ յիշատակը կնոջ մը, որ ամառները հոս անցուցած և բոլորին հաճոյք պատճառած էր եկեղեցական պաշտօններու միջոցին իր երգած մեներգներովն ու գեղեցիկ ձայնովը։

Երկու շաբաթ առաջ Պոստոնի Ս. Պողոս Մայր եկեղեցիին մէջ շատ գուհացուցիչ պաշտօնի մը մասնակցեցայ։ Երաժշտական մասը զիւղեցիկ, ճոխ և վսեմ էր։ Բոլոր ժողովուրդը սրտանց կ'երգէր։ Բոլոր նստաբաններուն յըրայ եկեղեցիին կողմէ դրուած երգարաններ կային։ Բոլոր պաշտօնը հիանալի կարգապահութեամբ կատարուեցաւ։ Նուիրատուութիւնը պաշտօնի մէկ մասը կը կազմէր, ինչպէս որ սովորական է Ամերիկայի մէջ։ Երբ բոլոր նուէրները սարկաւապներու կողմանէ հաւաքուեցաւ, ապա երկու սարկաւազներ ժողովուրդին բոլոր նուէրը բեմը տարին, որ հովիւին կողմանէ ընդունուեցաւ և Աստուծոյ ընծայուեցաւ, մինչ ժողովուրդը թաքի վրայ եղած միաբերան կ'երգէր։ «Փառաւորեցեք զԱստուծո, որմէ կուգան օրհնութիւններն բոլոր»։

Քարոզը՝ մեր մէջը ապրած աշխարհին ինչպիսի բարոյական մ'ունենալուն մասին էր, և անկէ հանուած դասը շատ անձնական էր։ «Մեզի համար անկարելի է մեր ապրած կեանքին արդիւնքներէն խուսափիլ։ Մարդ մը որ յիտաւնաց ժամացոյցով կը գործէ անշուշտ պիտի ուշանայ։ Շատեր չեն կրնար ըմբռնել կրօնքի այն ոյժը որ շատերը բարի կ'ընէ։ Ոչ մէկ մարդ թող անտեսէ

ներկայ առիթը այնպիսի բաներ ընտրելու որոնք տեւական երջանկութիւն յառաջ կը բերեն:

Քարոզիչը շատ ծանօթ եպիսկոպոսական կղեր մըն էր: Երբ պաշտօնը վերջացաւ և մենք եկեղեցիէն դուրս կ'ելլէինք, զայն գտանք փողոցը տանող սանդուխներուն գլուխը, ուր դուրս եկող ամէն մարդուն ձեռքը կը թօթուէր և զայն կ'ողջունէր:

Նստարաններուն վրայ պաշտօնի մէկ տպեալ կարգացոյցը կար, որ կը պարունակէր նաեւ շարթուան ծանուցումները: Յայտնի էր որ կանոնաւոր կերպով բոլոր եկեղեցի յաճախողներուն փոստով ղըրկուած էր ան: Քանզի ան օրուան նուէրին նպատակը կը գրէր, և կը խընդրէր որ անոնք որ չպիտի կրնային ներկայ ըլլալ իրենց փոխգիրները ղըրկին գանձապահին:

Ծանուցումին ետեւը գեղեցիկ հատուած մը կար, որ գրուած էր հովիւնկրէն մէկուն կողմանէ եկեղեցիին հոգեւոր կեանքին մասին: «Ահա մենք հաւատքէ չենք ամչնար: Իբր ժողովուրդ մը պաշտամունքի կը մասնակցինք: Եթէ մեր մէջը գաս, դուն պիտի զգաս իբր մարմին մը այս հաւաքական արտայայտութեան, այսինքն մեր հոգեւոր կեանքին, ոյժը: Այս եկեղեցիի պաշտամունքին մթնոլորտին մէջ շնչելով մէկը կ'զգար թէ ըստեան շիտակ էր: Օգոստ. 3

Ճ. Է. Մէրիլ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ընդծովեայի նաւազները ազատելու համար նոր միջոց մը հնարուեցաւ, որ Մ. Նահանգներու նաւատորմին մէջ գործածութեան պիտի դրուի: Այս միջոցը կը կոչուի, «ազատարար խուց», որ բաժնուած է վերի և վարի երկու մասերով: Այս երկու մասերը իրարու հետ

հաղորդակից են լայն ծակով մը: Ընկըղմած ընդծովեան փնտռող նաւէն լուղակ մը ազատարար խուցին կապուած երկաթէ պարանի մը ծայրէն բռնած դէպի վար կը սուզի և զայն ընդծովեային բերանը կ'ամրացնէ: Ապա այս խուցը, որ զանգակի կամ աւելի լաւ է ըսել մօտաւորապէս գլանի ձեւ մ'ունի, ջուրին մակերեսը գանուող նաւին կողմէ ջուրին մէջ կը ձգուի: Ազատարար խուցը վերի նաւին կապուած է երկաթէ պարանով մը: Խուցի վերի մասը օդախից է, և օդը, լոյսը և հեռախօսի հաղորդակցութիւնը մակերեսը եղող նաւէն կ'ստանայ: Ընկղմած սուզանաւի բերանը բացուելով նաւազները ազատարար խուցի վարի մասը կը դրուին. և ապա խուցը կը զոցուի և մէջը գանուող ջուրի ամբարները պարպուելուն պէս ինքնաբերաբար ջուրին երեսը կ'ելլէ: Ամէն անգամէն 18-20 հոգի 600 ոտք ծովու խորութենէն կրնան ազատուիլ այս խուցի միջոցաւ:

1929 ին Տր. Հիւկօ Էքները աշխարհի շրջանը 21 օրէն 7 ժամէն և 33 վայրկեանէն ըրաւ: Իսկ այժմ 1931 ին Հարօլտ Կաթթի 8 օրուան 15 ժամուան և 51 վայրկեանի մէջ աշխարհիս շրջանը ըրաւ:

Շոգենաւ մը կը շինուի որ Ատլանտեան օվկիանոսը 4 օրէն պիտի կտէ անցնի: Մօտ 35 հանգոյց պիտի ըլլայ անոր արագութիւնը և իր հսկայ կաթսաները 200,000 ձիու ուժ պիտի տաղրեն:

Նիւ Եորքի մէջ փողերաւոր երգահոն մը հնարուած է որ ելեկտրականութիւնը երաժշտութեան կը վերածէ առանց փողազններ և եղեգնափողի գործածելու: Այս գործիքը 3000 ձայնի աստիճաններ ունի 50000 ի մօտ գա-

նազան ելեկտրական հոսանքներ կը գործածէ և կրնայ արտադրել ձայնի որոնք մեծապէս բարձր են քան ուէ փողերաւոր երգեհոնը:

Գերմանիոյ մէջ տեսակ մը օդային կազ հնարուեցաւ որ սաւառնող սաւառնակները երկինքէն վար կ'իջեցնէ և նոր շարժիչ մեքենան կը խանգարէ: Այս կազին ծուխը կրնայ շարժիչը անմիջական կերպով կեցնել:

Առնուազն մէկ միլիոն տարուան հնութիւն ունեցող հեղուկ մը գտնուած է գեղեցիկ բիւրեղի մը կեղորոնը եղող խողովի մը մէջ: Այս խողովը 17 տրամ հեղուկ կը պարուենակէ:

Միջոցի անհունութեան մէջ թափառող տիեզերքները Մառնթ Ուիլսընի գիտարանին հսկայ մեքենայով կը ցուցուն այնպէս՝ ինչպէս անոնք միլիոնաւոր տարիներ առաջ գոյութիւն ունէին և ոչ այսօրուան վիճակով:

Ֆրանսական նաւային ճարտարագէտները նոր շինուած նաւ մը քննելին որ երեք չընկղմիր: Նաւուն յատակը խոշոր ծակեր ծակեցին, մէջը ջուրով լեցուեցաւ բայց կրկին նաւը չընկղմեցաւ:

Ճարտնայի գիտնական մը ձայնի և իր արձագանգի ալիքները տեսանելի կ'ընէ լուսանկարի մեքենայով մը՝ որ մէկ մանրերկրորդի մէջ 40,000 պատկերներ կրնայ առնել:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ «Անտառի օր» նշանակուած է ծառատնկութեան զարկ տալու համար: 1930 ի «Անտառի օր» ուան առթիւ 320000 ծառեր տնկուած են: Այս տարի նպատակ կայ 500000 նոր ծառեր տնկել:

ԿԱԼԿԱԹԱՅԻ Հայոց Մարդասիրական ճեմարանը, որ հիմնուած է 110 տարի առաջ, Մր. Բլարքի տեսչութեան օրերուն տալէն կերպով յառաջ գացած է. հիմնադրամը 381,365 ուսիլիէն բարձրացած է 913,888 ուսիլի:

ՓԱՐԻՋԻ ՄէՋ տեղի ունեցած ֆրանսաւական Հայ արուեստագէտներու Ա. ցուցահանդէսին մասնակցող 50 է աւելի արուեստագէտներու շարքին մէջ կը գտնուէր Տիար Արմենակ Միսիրեան, Հալէպի Պոյզ' Հայ Սքուլի գծագրութեան ուսուցիչը, որ իր արուեստը լրացնելու համար Փարիզ կը գտնուի ատենէ միվեր: Les Artistes d'Aujourd'hui անուն արուեստի երկշաքաթաթերթը որ Օգոս. 15 ի թիւին մէջ մասնաւոր գնահատանքով կը յիշէ Միսիրեանի գործը և տաղանդը:

ԱՔՍԻՈՆ ԲՐԷԹԻԷՆ ԱՆ ՕՐԻԱՆ ընկերութիւնը իր տարեկան միսիոնարական ժողովը ունեցէր է Սիբրապուրկի մէջ: Այս առթիւ Յուլիս 19ին Կիբակի առտուն երեք հայ երիտասարդներ—Իսրայէլ Աքրահամեան, Նէրսէս Պաշտառեան և Սամուէլ Պապալիան—որոնք «Լօզանի մօտ էմմաուս» կոչուող Ս. Դրական հաստատութեան մէջ երեք տարուան դասընթացք մը բոլորած էին» միսիոնարութեան կողմէ իբր Աւետարանի քարոզիչներ ձեռնադրուած են: Նոյն դպրոցը կ'ուսանի նաեւ Կալվին Պարսումեան, զաւակը բնիկ Այնթապցի և Լիոնի քարոզիչ Տիար Յուսիֆ Պարսումեանի:

Սեպ. 2 ի առաւօտուն, Հալէպ տեղի ունեցաւ Անթիլիասի ընծայարանի աշակերտներուն կողմէ կառավարուած Ս. Դրքի ամառնային դպրոցի հանդէսը: Եղան աշխարհաբար սաղմոսի հաւաքական արտասանութիւններ, տրամախօսութիւն, շարականի երգեցողութիւն, գեղեցիկ խօսքերու և ոսկեղէն համարներու արտասանութիւն: Շատ գնահատելի են եղած օգտաշատ ջանքերը:

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷՁԸ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՐԻՐ Է

Հիւրերուն մէջ կար մէկը՝ որ իր առողջանութեամբը և շիտակ արտասանութեամբը հոչակ հանած էր։ Ներկաներուն հաճոյք պատճառելու համար յայտարարեց թէ իրենց առաջարկած մէկ կտորը պիտի արտասանէր։

«Եթէ կը հաճիք, արտասանեցէք ի՜նչ։ Սաղմօսը — Տէրը իմ հովիւս է» — խնդրեց երկչոտ ձայն մը։ Ծեր քարոզիչ մըն էր՝ տարիներու քրիստոնէական պայքարով ալիհեր։

«Ի՜նչ։ Սաղմօսը... մէկ պայմանաւ, թէ՛ ինձմէ ետք դուք ևս պիտի արտասանէք զայն»։

«Ես», զարմացմամբ գոչեց քարոզիչը, «ես ո՛չ առողջանութիւն գիտեմ ո՛չ արտասանութիւն։ Բայց շատ լաւ, քանի որ կ'ուզէք»։

Արտասանեց հետտորը՝ բառերը հատ հատ, վսեմ հնչումով, շեշտերն իրենց տեղը։ Երբ լմնացուց, բուն ծափահարութիւն մը ողջունեց իր յաջողութիւնը։

«Իսկ հիմա՛, դո՛ւք» դարձաւ քարոզիչին։

Դողդոջուն ձայնով, տկար շեշտերով, մեղմօրէն արտասանեց ան. առողջանութիւնը յաճախ սխալ և հնչումը թերի էր, ու ոչ մէկ ծափահարութիւն լսուեցաւ երբ վերջացուց։ Եւ սակայն ներկաներուն մէջ չկար մէկը որուն զրուիքը ձուած և կամ աչքը թաց չբլլար։

Հետտորը յուզմամբ մօտեցաւ ձեռքը քարոզչին ուսին զնկելով՝ ու դարձաւ հիւրերուն. «Բարեկամներ», ըսաւ, «ես ձեր տկանջներուն խօսեցայ, ինք ձեր սրտերուն։ Տարբերութիւնը հոս է — ես Գիտեմ ի՜նչ։ Սաղմօսը, ինք գիտէ Հովիւը»։

Քրիստոս Յիսուսի վրայ շատ ճարտարութեամբ և գիտնականութեամբ խօսիլ կարելի է։ Բայց պէտք եղածը՝ Զինք փորձառարար գիտնալ է։
Քեսապ, Տ. Ե. Բ.

ՏՐԵՒՍ...

Չորս տարի առաջ, երբ Թուրքիոյ մէջ քրդական շարժումը կը զսպուէր, Տիգրանակերտի մէջ կախուող Բուրդուրուն մէջ գտնուեցաւ մէկը որ կախաղանի մասին բնաւ գաղափար չունէր։ Յորեկ ատեն ֆութպօլի դաշտին կանգնուած ահապօղակիկ եռոտանիին առջեւ բերուեցաւ ան, հրամանին հնազանդելով աթուռի վրայ ելաւ, և չունելով անցնելու վրայ էր երբ, այն սոսկալի վայրկեանին, նա իր տրեխը տեսաւ գետին նետուած, և ըսաւ. «Տրեխս, տրեխս՝ տուէք»։

Մարգկային մեծ բաղմութիւն մը այսօր, նման այդ խեղճ մարդուն, «տրեխս, տրեխս», կը պոռայ մոռնալով իրենց յաւիտենականութեան սպասնացող ահաւոր վտանգը։

ԴԱՀԻՐԷԻ ԶԱՆԻՑԻ ԿԵԱՆՔԷՆ

Երաժշտական յանձնախումբին կարգադրութեամբը Մայիս 29, երեկոյեան ժամը 9 ին տեղի ունեցաւ նուագահանդէս մը եկեղեցւոյ բակին մէջ, որ յատկապէս ծաղիկներով զարդարուած էր։ Ներկայ էին մօտաւորապէս 110 հոգի։ Հանդէսին նախագահեց Փրոֆ. Յ. Թ. Գայտեան որ ճառ մը խօսեցաւ երաժշտութեան վրայ։

Եկեղեցիին երգչախումբը՝ Տիկնանց խումբէնէն և Զանից անդամներէն նորոյժեր ընտրելով իր կազմած 20 հոգինոց խումբովը երգեց երեք ընտիր երգեր և կցուրդներ։

Նուագախումբը՝ կազմուած Զանիցի

անդամները և մի քանի համակիրներէ՝ նուագեց զեղեցիկ կտորներ: Օր. Ն. Կիւզէլիմեան նուագեց դաշնակի վրայ, Տիար Պ. Սվաճեան՝ սաքսոֆոն Տիար քէլէիէֆ և Յ. Տէր Դէորդեան սրինգ (Ֆլուիթ), Զ. Պալուչի, Խ. Կիւզէլիմեան, Շաքարեան, Պարոնեան և Վ. Ն. Կիւզէլիմեան՝ ջութակ: Քառերգներ, մեներգներ, զուգերգներ երգեցին և ծափեր խփեցին Տիկ. Գոնաուրաճեան, օրք. Մ. Իշխանեան, Զ. Գասարճեան, Զ. Իշխանեան, Տիար ք. Իշխանեան, Վ. Շաքարեան, Լ. Գասարճեան: Նուագի ծանօթ ուսուցիչը, Փրոֆ. Խաչատուրեան որ ներկայ էր, գնահատական խօսքերով քաջալերեց երգողներն ու նուագողները:

Ժողովուրդը մեկնեցաւ շատ գոհ ապաւորութեամբ, և յաճախ նման վայելքներ ունենալու փափաքով:

Երեկոյին, 40 հոգինոց խումբով մը այցելեցինք Բուրգերը և Սփինքսը: Հանրակառքով մօտ մէկ ժամ տեւող ճամբորդութիւնը անցաւ զուարթ խօսակցութիւններով և ուրախ երգերով:

Լիալուսնին, մեծ Դէոֆո բուրգին ստորոտը ճաշիլէ հաքը, խումբը ուղղուեցաւ դէպի Սփինքսը: Այս պատմական երկու հնութեանց մասին տեղեկութիւններ հաղորդեց անդամներէն մէկը:

Մնացած ժամանակը երգերով և խաղերով անցնելէ հաքը, կէս գիշերին հանրակառքով վերադարձանք, ուրախ տրամադրութիւններով և իրարու հարցնելով. «Արդհօք տարին մի քանի անգամ այսպէս հօս չգանք»:

Օգոստ. 16 ի կիրակին անմոռանալի օր մը եղաւ Գահիրէի Հայ Աւետ. եկեղեցիին և իր Զանկը ընկ. եան համար:

Առաւօտեան ժամը 7 ին կառարսումսով՝ ժողովուրդէն փափաքողները շուտով 120 հոգի ճամբայ ելանք դէպի Պարրատ, Գահիրէէն 36 քիլոմէթր հե-

ռաւորութեամբ, ընդարձակ պարտէզ-կղզի մը:

Հոն հասնելով՝ իւրաքանչիւր ընտանիք իր նախաճաշը ընելէ և հանգստանալէ յետոյ, ժամը 10 ին կատարուեցաւ եկեղեցական պաշտամունքը, ժողովուրդը նստած ըլլալով մարգագետնի վրայ: Վեր. Հ. Յ. Համբարձումեան հոգեշունչ քարոզ մը տուաւ, նիւթ ունենալով «եկեղեցին Աստուծոյ ընտանիքն է», և շեշտեց թէ իրական և տեական Միութիւնը կարելի է միայն անկեղծ սիրով՝ զօր Աստուած մեզի յայտնած է Բրիտանոսով:

Մի քանի տիկիներու շաքաթ օրուանէ պատրաստած լահմէճուները ըստեւեցան չորս շաքի վրայ նստող ժողովուրդին, և միասին ճաշեցինք մէկ ընտանիքի պէս:

Կէս օրէ հաքը ժամը 3 ին տեղի ունեցաւ Զանկի կիրակնօրեայ պաշտամունքը: 50 հոգի ներկայ էր:

Ժամը 6.30 ին ժողովուրդը կրկին հաւաքուեցաւ և փառաբանութեան երգը երգելով վերադարձաւ երեկոյին կառարսումսով:

Այս օրը ժողովուրդին համար իրական պաշտամունքի և վայելքի օր մեղաւ:

Խ. Յ. ԿԻԻԶԷԼԻՄԵԱՆ

ՀԱԼԷՊ Էմմանուէլ եկեղեցւոյ Զանկը Օգոստոս 22 ին չորս անդամներէ բաղկացած խումբ մը ուղարկեց Սըւետիոյ գիւղերը: Զեռնարկին նպատակն էր այդ կողմերու եկեղեցիներուն այց մը տալ և օգնել անոնց: Պատուիրակութեան անդամներն էին Պր. Մանասէ Ծնորհօքեան, Պր. Եղուարդ Թովմասեան, Պր. Զաւէն Բուպեան և Պր. Բիւզանդ Գալֆաեան:

صاحب الامتياز والمدير المستول

القس ق. هاروتونيان